


ԳՈՒԳԳԵՆ ԽԱՉՍՏՐՅԱՆ, Գրաբար, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2014, 491 էջ:

Գրաբարի ուսումնասիրության նոր
հայեցակարգ



Ժողովրդի պատմական հիշողությունը ենթադրում է նաև հոգևոր մշակույթի պարբերական թարմացում և շրջանառություն: Այդ իմաստով բացառություն չեն կարող լինել «մեր անգին գրաբար լեզվի» իմացությունը, ուսումնասիրությունը և ուսումնաստությունը: Գրաբարի մասին վերջին տասնամյակներում լույս են ընծայվել դասագրքեր, ձեռնարկներ և ինքնուսույցներ, որոնց թերևս հնարավոր չէ մեկ անդրադարձ կատարել: Դրանք հեղինակել են Ա. Աբրահամյանը, Պ. Շարախանյանը, Պ. Բեդիրյանը, Հ. Ավետիսյանը և Ռ. Ղազարյանը, Լ. Խաչատրյանը և Գ. Թոսունյանը, Վ. Համբարձումյանը, Է. Մկրտչյանը, այլ: Սակայն այս հեղինակների հետ ու նրանց կողքին հարկ է հիշատակել նաև անունը բ. գ.դ., պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի, ով արդեն երեք տասնամյակ գրաբարի ուսումնասիրության ինքնապարտավորությունն ունի: Առաջինը գրաբարի շարահյուսության ձեռնարկն էր («Գրաբարի շարահյուսու-

թյան ձեռնարկ» Վանաձոր, 1989թ.), որին նախորդել էր հեղինակի «Գրաբարի բայական միակազմ նախադասությունները (5-րդ դար)» (1986թ.) թեկնածուական ատենախոսությունը: Սրանց հաջորդեցին «Գրաբարի վերլուծական բայերի արժույթը» (Երևան, 2000թ.), «Գրաբարի միակազմ նախադասությունները» (Երևան, 2002թ.) աշխատությունները: Իսկ հեղինակի «Հայերենագիտական աշխատասիրություններ» (Երևան, 2008թ.) ժողովածուի մեջ ներառվել են «Ժողովրդախոսակցական ոճի տարրերը Բուզանդի երկում», «Գրաբարի համադրական պատճառական բայերի արժույթը», «Նարեկի –ա/ե/լի ածանցավոր նորաբանությունները», «Գրաբարի կրկնասեռ բայերը», «Աստուածաշունչը գրոց հայերեն թարգմանության հարադրավոր բայերը», այլ ուսումնասիրություններ, որոնք հեղինակի մշտական պրպտումների արդյունքն են ու վկայությունը: Այս ամենին հավելենք նաև Մեբեոսի և Գրիգոր Ակներցու պատմությունների փոխադրում-թարգմանությունները աշխարհաբար արևելահայերենի (աշխատանքն իրականացվել է բ.գ.դ. Վ. Եղիազարյանի համահեղինակությամբ):

Օրերս «Ոսկան Երևանցի» հրատարակչությունը լույս է ընծայել բ.գ.դ., պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի «Գրաբար» աշխատությունը, որը, ինչպես խոստովանում է հեղինակը, իր երեսնամյա դասախոսական աշխատանքի արդյունքն է:

Գիտնականի հեղինակած աշխատությունը մի շարք կողմերով տարբերվում է նախորդներից:

1. Գիրքն իր շարադրանքի ոճով և կառուցվածքով կարող է ծառայել նաև որպես ինքնուսույց:
2. Գրքում առանձնակի տեղ են գրավում աղյուսակներն ու գծապատկերները, որոնցով տեսական նյութի մատուցումը դառնում է ավելի շոշափելի:
3. Առաջին անգամ հեշտ և ճիշտ ընթերցանության համար ընտրվել է նոր մեթոդ. ընդհանուր-պատմական հնչյունափոխության վերաբերյալ տեսական նյութին հաջորդած բնագրային տողերի տակ բերվում է նրանց մեթոդյա ընթերցանության տարբերակը, որով գրաբար բնագրին առաջին անգամ առնչվողն առանց դժվարության սկսում է կարդալ այն՝ հարկ եղած դեպքում ստուգելով իր ընթերցանության ճշտությունը:
4. Առանձին ուշադրության առարկա են անկանոն և պակասավոր գոյականները, դերանունները և բայերը, որոնց մի մասը Գ. Խաչատրյանը ներկայացնում է աղյուսակներով, որոնք նյութի մատուցումը դարձնում են դյուրին:
5. Նկատելի է, որ գրաբարի քերականությանը և ոճաբանությանը վերաբերող մի շարք եզրույթների փոխարեն Գ. Խաչատրյանն առաջարկում է դրանց արդիհայերենյան համարժեքները, և դրանով իսկ, ինչպես նշվում է գրքի առաջաբանում, տեսական նյութի մատուցումը դառնում է համադրելի և ընկալելի: Սրանով նաև որոշակի միօրինակություն է ձևավորվում հայերենի զարգացման տարբեր շրջանների ուսումնասիրության ընթացքում, և եզրույթաբանական մակարդակում:
6. Գրեթե բոլոր թեմաներից հետո նախատեսվում է բնագրային անգիր հատված, ինչն, իրոք, հնարավորություն է ընձեռում առավել շոշափելի գգալու հին հայերենի շունչն ու իրեղենությունը:
7. Գործնական աշխատանքների համար նախատեսված նյութերում տեղ են գտել միայն բնագրային այնպիսի նախադասություններ, որոնցում առկա է տվյալ թեմային վերաբերող լեզվական նյութ, որն, ինչ խոսք, տեսական գիտելիքներն ամրապնդելու հիմնական մեթոդներից մեկն է:
8. Ընթերցանության համար գրքի վերջում զետեղված են բնագրային հատվածներ 5-րդ և հետագա դարերի հայ մատենագիրների երկերից, ինչպես նաև «Աստվածաշնչից» և Եզնիկ Կողբացու «Եղծ»-ից: Գ. Խաչատրյանը մատենագիրների երկերի հերթականությունն ընտրել է դյուրինից դեպի դժվար մտնեցմամբ: Եվ իրոք, ընթերցանության համար ընտրված առաջին միավորի հեղինակի՝ 17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցու պատմությունից բերված հատվածը գրված է այսօրվա ընթերցողին գրեթե հասկանալի գրաբարով, ինչը չի կարելի ասել, օրինակ, Եղիշեի կամ Խորենացու երկերից բերված հատվածների մասին:
9. Գրքի առաջնահերթ առավելություններից են ծանոթագրություններն ու հրնթացս տրված բացատրությունները, որոնցից վերջիններին հեղինակը դիմում է տեսական նյութի շարադրանքում: Ինչ վերաբերում է ծանոթագրություններին, սպա այստեղ հեղինակը հանդես է բերում այնպիսի փութաջանություն, որը կարող է բավարարել նույնիսկ ամենահետաքրքրասեր ուսանողին:
10. Տեսական նյութի առումով Գ. Խաչատրյանը բերում է մի շարք նորություններ.
- 10.1. Որակական անկանոնների համեմատության աստիճանի քերականական

կարգի երրորդ եզրը՝ գերադրականը, գրաբարում չունի քերականական արտահայտության միջոց: Ավանդաբար այդպիսի միջոց համարվող միավորները (*յոժ բարի* և այլն) սովորական ազատ բառակապակցություններ են, որոնք, այդուհանդերձ, ցույց չեն տալիս հատկանիշի գերադրական աստիճան («ամենա-...» կամ «... -ագույն» իմաստով): Եվ իրոք, *յոժ բարի* նշանակում է ոչ թե «ամենաբարի», այլ «շատ բարի»: Գ. Խաչատրյանը բերում է հազվագյուտ օրինակներ, որոնք արտահայտում են գերադրական աստիճանի քերականական իմաստ:

10.2. Որոշակի փաստերով հիմնավորում է, որ ենթակայական դերբայը գրաբարում դեռևս լիարժեքորեն չի համարել գրաբարի անդամ բայերի շարքը, և այդ դերբային նշված շարքում տեղ է տալիս պայմանականորեն:

10.3. Ավանդաբար *անցյալ* անվանվող դերբայը վերանվանելով *վաղակատար-հարակատար*՝ նա գտնում է, որ գրաբարյան այդ դերբայի իսկությունն այդպես ավելի ճիշտ և ամբողջական է ընկալվում: Բանն այն է՝ անցյալ դերբայը գրաբարում ունի երկակի բնույթ. կարող է հանդես գալ և՛ որպես ձևակազմիչ և՛ որպես անկախ դերբայ: Առաջին դեպքում, *եւ* բայի հետ հանդես գալով, կարող է արտահայտել ժամանակակից հայերենի թե՛ վաղակատարի և թե՛ հարակատարի քերականական իմաստները, իսկ իբրև անկախ դերբայ հանդես գալու դեպքում կարող է արտահայտել ժամանակակից հայերենի միայն հարակատար դերբայի քերականական իմաստը:

10.4. Միևնույն մոտեցմամբ *ասպանի* անվանվող դերբայը վերանվանելով ժամանակակից հայերենի եզրաբառով (*ասպա-*

կատար)՝ Գ. Խաչատրյանը տրամաբանորեն ճիշտ անվանումներ է առաջարկում գրաբարի վաղակատար-հարակատար և ապակատար դերբայներով կազմված վերլուծական ժամանակաձևերի համար՝ ելնելով *եւ*/օժանդակ բայի պահպանած երեք ժամանակներից [*եւ* (ներկա), էի (անցյալ), իցեմ (ապառնի)]՝ վաղակատար-հարակատար ներկա, վաղակատար-հարակատար անցյալ և վաղակատար-հարակատար ապառնի, ապակատար ներկա, ապակատար անցյալ և ապակատար ապառնի:

10.5. Դիմավոր բայի համակարգում Գ. Խաչատրյանն առանձնացնում է ոչ թե 14, այլ 13 ժամանակաձև՝ ավանդաբար առանձին ժամանակաձևեր համարվող բուն հրամայականն ու արգելական հրամայականն իրավացիորեն դիտելով մեկ ժամանակաձև՝ ապառնի հրամայական՝ իր դրական և ժխտական խոնարհումներով:

10.6. Գ. Խաչատրյանն առանձնակի ուշադրություն է դարձնում բայի սեռի քերականական իմաստների արտահայտության միջոցներին, մասնավորապես կրկնասեռությանը, որը նա ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է գրաբարի բայի սեռին վերաբերող թեմաների սահմաններում: Պարզվում է, որ գրաբարի ներգործական սեռի բայերի ամենաբնորոշ հատկանիշներից մեկը կրկնասեռությունն է. չկա ներգործական սեռի որևէ բայ, որն ինչ-որ չափով կրկնասեռություն հանդես չբերի:

10.7. Խոսքի մեջ գոյականների և առարկա ցույց տվող այլ բառերի հետ ածականների, թվականների և առարկայի հատկանիշ ցույց տվող դերանունների գործածությունը վերաբերող հարցերը, որ սովորաբար ուսումնասիրվում էին ձևա-

բանության բաժնում, Գ. Խաչատրյանը տեղ է տվել շարահյուսության բաժնում որոշիչ-որոշյալ կապակցությունը ներկայացնելիս:

10.8. Նույն կերպ է վարվում նաև կապ (նախդիրներ, նախադրություններ և հետադրություններ) խոսքի մասի առումով՝ կապական կապակցություններին տեղ տալով նախադասության անդամների արտահայտության պլանը բնութագրելիս:

Գրաբարն ուսումնասիրողը և մյուս հեղինակներին ծանոթ բանասերը թերևս նկատի նաև այլ իրողություններ ու տար-

բերություններ, սակայն, կարծում ենք, ասվածը բավական է, որպեսզի փաստենք աշխատանքի արժանիքները:

Հավելենք նաև այն իրողությունը, որ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանում Գ. Խաչատրյանի դեկավարությամբ ձևավորվել է հեղինակների մի համախումբ, որոնց ամենօրյա զննումների և ուսումնասիրության նյութն է գրաբարը, ասել է՝ գործ ունենք դպրոց երևույթի հետ:

Լ. Հովհաննիսյան, բ.գ.դ., պրոֆեսոր
Վ. Փիլոյան, բ.գ.թ., դոցենտ